ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌ 2022

Հարցման արդյունքների վերլուծությունը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից 2022թ. հոկտեմբերի 23-ին:

Որակի ապահովման բաժնի պատասխանատուներ՝

Հայրապետյան Ք.

Նախրատյան Մ.

Մուրադյան Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարցման ընդհանուր նկարագիրը ……………………………………….……………4
2. Հարցման մեթոդաբանությունը …………………………………………………4
3. ԳՊՀ առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանում……………………………5
4. Եզրակացություններ և առաջարկություններ ………….………………………………8

I. Հարցման ընդհանուր նկարագիրը.

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) որակի ապահովման բաժինը ԳՊՀ ուսանող-բուհ կապն ամրապնդելու, առաջին կուրսեցիների կարիքները բացահայտելու, սոցիալական և ֆինանսական աջակցություն տրամադրելու, ուսանողական առօրյան բովանդակալից և արդյունավետ կազմակերպելու նպատակով առաջին կուրսեցիների շրջանում իրականացրել է հարցում: Հարցման նպատակն է ամրապնդել ուսանող-բուհ կապը, վերհանել ուսանողների խնդիրները և նրանց մասնակիցը դարձնել բուհի առօրյային:

II. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցաթերթի հարցերը մշակվել և կազմվել են Համալսարանի որակի ապահովման բաժնի աշխատակիցների և ԳՊՀ դասախոսների, ուսանողների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցումն իրականացվել է թղթային տարբերակով: Հարցման նպատակն է որակական և քանակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, որը միտված է բուհում ուսանողների խնդիրների բացահայտմանը և ներքին շահակիցների բավարարվածության աճին:

ԳՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

ԳՊՀ առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման վերաբերյալ հարցմանը մասնակցել են 2022-2023 ուսումնական տարվա առկա ուսուցման 1-ին կուրսի թվով 51 ուսանողներ, որը կազմում է առաջին կուրսի ուսանողների 98%-ը:

Հարց 1-ին. «Ինչպե՞ս որոշեցիք ընդունվել ԳՊՀ և ընտրել տվյալ մասնագիտությունը»:
Հարցվածներից 47-ը տվել է «իմ որոշմամբ» պատասխանը, իսկ 4-ը՝ «ծնողներիս խորհրդով» պատասխանը: Արդյունքները փաստում են, որ առաջին կուրսի ուսանողները բուհը և մասնագիտությունը ընտրելիս հաստատակամ են և կարևորում են իրենց անձնական նախասիրությունները:

Հարց 2-րդ. «Ընտանիքի կազմը, նրանց զբաղվածությունը, առողջական վիճակը»:

Ընտանիքի կազմին, զբաղվածությանը և առողջական վիճակին վերաբերող հարցին ի պատասխան հարցվողներց 2-ը նշել են, որ միակողմանի ծնողազուրկ են, 28,8%-ը նշել են, որ ծնողները գործազուրկ են, ունեն հաշմանդամության 2-րդ կամ 3-րդ կարգ, իսկ 26%-ը ծնողների որպես աշատանք նշել է ձկնորսությունը, շինարարությունը և արտազնա աշխատանքը:

Հարցվողների մեծ մասը նաև ունեն քույր և եղբայրներ, ովքեր կամ աշակերտներ են, կամ ուսանողներ, կամ ծառայում են Հայոց բանակում, Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակիցներ են:

Հարց 3-րդ. «**Հաշվառված եք ընտանիքների անապահովության «Փարոս» համակարգում»:**

Հարցվողների 38,4%-ը (20 ուսանող) նշել է, որ օգտվում է ընտանիքների անապահովության գնահատման «Փարոս» համակարգից:

Հարց 4-րդ. «Ունե՞ք համակարգիչ»:
Հարցվողների 80,3%-ը նշել են, որ ունեն համակարգիչներ, իսկ 19,6%-ը՝ նշել ոչ պատասխանը:

Հարց 5-րդ. «Ունե՞ք էլեկտրոնային փոստ հարցե»:

Հարցվողների 100%-ը տվել է «այո» պատասխանը:

Հարց 6-րդ. «Ուսանողական ինքնակառավարման ո՞ր կառույցներին կցանկանայիք անդամակցել»:

Հարվցողները տվել են հետևյալ պատասախանները.

- ուսանողական խորհուրդ-30
- ուսանողական գիտական ընկերություն-8

- ստեղծագործողների ակումբը -16
- ուսանողական խորհուրդ,
- ուսանողական գիտական ընկերություն,
- տնտեսագետների ակումբ-10

Հարց 7-րդ. «Ի՞նչ նախասիրություններ ունեք»:

Հարցվողները տվել են հետևյալ պատասխանները.

- դաշնամուր,
- սպորտ,
- երգ, պար,
- ասմունք,
- նկարչություն,
- ընթերցանություն,
- երաժշտություն:

Հարց 8-րդ. «Ի՞նչ արտադպրոցական հաստատություններ եք հաճախել»:

Հարցվողները տվել են հետևյալ պատասխանները.

- Գավառի Արվեստի դպրոց,
- Գավառի Ս. Աստվածածին եկեղեցուն կից կիրակնօրյա դպրոց,
- «Luseen Technologies» տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման կենտրոն,
- «Զարթնիր և ընթերցիր» ընթերցանության խմբակ,
- Գավառի Հենրիկ Թալալյանի անվան երաժշտական դպրոց,
- Նորատուսի արվեստի դպրոց,
- Գավառի արվեստի դպրոց:

Հարց 8-րդ. «Ի՞նչ խմբակներ կցանկանայիք հաճախել ԳՊՀ-ում»:

Հարցին ի պատասխան ներկայացվել են հետևայլ պատասխանները.

- Բնագետների ակումբ- 4 ուսանող
- Տուրիզմի ակումբ-17 ուսանող
- Նկարչական ստուդիա-13 ուսանող
- Սպորտային խմբակ-12 ուսանող

Լեզուների իմացության մակարդակը ստուգող հարցի վերլուծության արդյունքում պարզվել է, որ ուսանողները տիրապետում են ռուսերեն և անգլերեն լեզուներին մեծամասամբ «լավ» և «բավարար» մակարդակներում, անգլերեն լեզվին գերազանց է տիրապետում 6 ուսանող, ռուսերեն լեզվի 4 ուսանող:

«Ինչպիսի՞ ակնկալիքներ ունեք մասնագիտության կրթական ծրագիրն ավարտելիս» հարցին ուսանողները տվել են հետևյալ պատասխանները.

- ✓ դառնալ բանիմաց և հմուտ մասնագետ,
- ✓ հասնել մեծ բարձունքների
- ✓ հուսով եմ համալսարանը կօգնի իրագործել երազանքս
- ✓ տանալ լիարժեք և որակյալ կրթություն,
- ✓ ցանկանում եմ դառնալ լավ դեղագործ,
- ✓ դառնալ հայրենիքիս համար լավ մասնագետ
- ✓ ստանալ գերազանց կրթություն, ակնկալիքներս շատ են
- ✓ ստանալ որակյալ կրթություն և դառնալ լավ մասնագետ,
- ✓ ստանալ որակյալ կրթություն
- ✓ ստանալ մնայուն գիտելիքներ, զարգացնել գիտելիքներս, դառնալ լավագույն մասնագետ,
- ✓ դառնալ մրցունակ մասնագետ,
- ✓ ձեռք բերել մասնագիտական հմտություններ,
- ✓ դառնալ պահանջված իրավագետ,
- ✓ շատ մեծ,
- ✓ ցանկանում եմ դառնալ փորձառու մասնագետ:

Եզրակացություններ, առաջարկություններ

Հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ ԳՊՀ-ում ընդունված առաջին կուրսեցիների կեսից ավելին սոցիալապես անապահով ընտանիքների անդամներ են, հիմնական մասի ծնողները չեն աշխատում և հաշվառված են «Փարոս» համակարգում, ունեն սոցիալական աջակցության կարիք:

Հարցվողների մեծ մասը նշել են, որ մասնագիտության ընտրության հարցում հաստատակամ են և կարևորում են իրենց անձնական նախասիրությունները: Հարցվողները նաև նշել են, որ ուսանողական ինքնակառավարման կառույցներից նախընտրում են ուսանողական խորհուրդը, իսկ նախասիրությունների շարքում առաջնային տեղում են դաշնամուրը, սպորտը, երգը, պարը, զբոսաշրջությունը:

Բացահայտելով առաջին կուրսեցիների կարիքները և նախասիրությունները՝ Գավառի պետական համալսարանի համար մեծ հնարավորություն է ստեղծվում ուսանողների առօրյան հագեցած կազմակերպելու, սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակներում նրանց ֆինանսական օգնություն տրամադրելու, լեզուների

իմացության մակարդակը և տեխնիկական գրագիտությունը բարձրացնելու, ինչպես նաև բուհում նրանց նախասիրությունների խթանման համար։

Գավառի պետական համալսարանում ԳՊՀ առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծություն վերլուծությունը, եզրակացություններն ու առաջարկությունները հղվել են ԳՊՀ բոլոր ստորաբաժանումներին, որպեսզի ուսումնասիրվեն, ներկայացվեն համապատասխան լուծումներ ու առաջարկություններ, արդյունքում ձեռնարկվեն միջոցներ՝ ԳՊՀ հիմնական շահառուների՝ ուսանողների, բավարարվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ։